

# Հեպատիտ A-ի պատվաստանյութ Ի՞նչ է անհրաժեշտ ձեզ իմանալ:

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis)  
Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս՝ [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis)

## 1 Ինչո՞ւ պատվաստվել:

Հեպատիտ A-ն յարդի լուրջ հիվանդություն է: Դրա պատճառը հեպատիտ A վիրուսն է (HAV): HAV-ը տարածվում է մի մարդուց մյուսին՝ վարակված մարդկանց կղանքի (կեղտի) հետ շփվելիս, ինչը հեշտությամբ կարող է տեղի ունենալ, եթե որևէ մեկը հարկ եղած կերպով չի լվանում իր ձեռքերը: Դուք հեշտությամբ կարող եք հեպատիտ A ստանալ սննդամթերքի, ջրի կամ HAV-ով վարակված առարկաների միջոցով:

- Հեպատիտ A-ի ախտանիշներն են՝
- տենդը, թուլությունը, ախորժակի կորուստը, սրտխառնոցը, փսխումը և/կամ հոդացավը
  - ստամոքսի սուր ցավը և լուծը (հիմնականում երեխաների մոտ) կամ
  - դեղնածությունը (մաշկի կամ աչքերի դեղին գույնը, մուգ գույնի մեզր, կավագույն կղանքը):

Այս ախտանիշները սովորաբար ի հայտ են գալիս վարակվելուց 2-ից 6 շաբաթ անց և սովորաբար տևում են 2 ամսից պակաս, սակայն որոշ մարդիկ կարող են մինչև 6 ամիս հիվանդ լինել: Եթե դուք հեպատիտ A ունեք, հնարավոր է՝ շատ թույլ լինեք աշխատելու համար:

Երեխաների մոտ հաճախ ախտանիշներ չեն լինում, բայց մեծահասակների մեծ մասի մոտ լինում են: Դուք HAV կարող եք տարածել՝ առանց ախտանիշներ ունենալու:

Հեպատիտ A-ն կարող է յարդի վնասվածքի և մահվան պատճառ լինել՝ չնայած դա հազվադեպ է և հիմնականում հանդիպում է յարդի այլ հիվանդություններ, ինչպես, օրինակ՝ հեպատիտ B կամ C ունեցող 50 տարեկան կամ ավել տարիքի անձանց մոտ:

**Հեպատիտ A-ի պատվաստանյութը կարող է կանխել հեպատիտ A-ն:** Միացյալ Նահանգներում հեպատիտ A-ի պատվաստանյութի օգտագործումը խորհուրդ է տրվել 1996թ.-ից սկսած: Այդ ժամանակից ի վեր՝ ԱՄՆ-ում հիվանդության հայտնի դեպքերի թիվը 31000-ից նվազել է մինչև 1500-ը:

## 2 Հեպատիտ A-ի պատվաստանյութը

Հեպատիտ A-ի պատվաստանյութն ակտիվությունից զրկված (սպանված) պատվաստանյութն է: Ձեզ պետք կլինի **2 դեղաչափ**՝ երկարատև պաշտպանության համար: Այդ դեղաչափերը պետք է տրվեն առնվազն 6 ամիս տարբերությամբ:

Երեխաները, ըստ ընդունված կարգի, պատվաստվում են մեկից մինչև երկու տարեկանը (12-ից մինչև 23 ամսականը) ընկած ժամանակահատվածում: Ավելի մեծ երեխաները և դեռահասները պատվաստանյութը կարող են ստանալ 23 ամսականից հետո: Մեծահասակները, ովքեր նախկինում պատվաստված չեն եղել և ցանկանում են պաշտպանվել հեպատիտ A-ից, նա կարող են պատվաստանյութ ստանալ:

Hepatitis A VIS - Armenian (7/20/2016)

Դուք պետք է հեպատիտ A-ի պատվաստանյութ ստանաք, եթե՝

- ուղևորվում եք այնպիսի երկրներ, որտեղ հեպատիտ A-ն հաճախ է հանդիպում,
- եթե դուք տղամարդ եք և սեռական հարաբերություն եք ունենում ուրիշ տղամարդու հետ,
- արգելված դեղանյութեր (թմրանյութեր) եք օգտագործում,
- ունեք հեպատիտ B-ի կամ հեպատիտ C-ի նման յարդի քրոնիկ հիվանդություններ,
- բուժվում եք արյան մակարդեղիության գործոնների խտանյութերով,
- աշխատում եք հեպատիտ A-ով վարակված կենդանիների հետ կամ հեպատիտ A հետազոտող լաբորատորիաներում կամ
- ակնկալվում է, որ անմիջական անձնական շփումներ կունենաք արտասահմանից որդեգրվող երեխաների հետ, ովքեր այնպիսի երկրներից են, որտեղ հեպատիտ A-ն հաճախ է հանդիպում:

Հարցրեք ձեր բժշկին, եթե ցանկանում եք այս խմբերից որևէ մեկի մասին ավելի իմանալ: Այլ պատվաստանյութեր ստանալու հետ մեկտեղ հեպատիտ A-ի պատվաստանյութ ստանալու ոլիսկեր հայտնի չեն:

## 3 Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստանյութը

Ձեզ պատվաստանյութ ներարկող անձին տեղյակ պահեք՝

- **Եթե դուք սուր և կյանքին սպառնացող ալերգիաներ ունեք:** Ձեզ խորհուրդ չի տրվում պատվաստվել, եթե դուք երբևէ հեպատիտ A-ի պատվաստանյութ ստանալուց հետո ունեցել եք կյանքին սպառնացող ալերգիկ ռեակցիա կամ այդ պատվաստանյութի որևէ բաղադրիչի նկատմամբ սուր ալերգիկ ռեակցիա եք ունեցել: Հարցրեք ձեր բժշկին, եթե ցանկանում եք պատվաստանյութի բաղադրիչների մասին տեղեկություններ ստանալ:
- **Եթե դուք վատ եք զգում:** Եթե թեթև հիվանդություն ունեք, ինչպես, օրինակ՝ մրսածությունը, դուք, հավանաբար, այսօր կարող եք պատվաստում ստանալ: Եթե միջին աստիճանի կամ ծանր հիվանդություն ունեք, դուք, հավանաբար, պետք է սպասեք մինչև ապաքինվելը: Ձեր բժիշկը կարող է ձեզ խորհուրդներ տալ:



U.S. Department of Health and Human Services  
Centers for Disease Control and Prevention

4

**Պատվաստանյութից առաջացող  
ոտակցիաների ռիսկերը**

Ցանկացած դեղամիջոցի դեպքում՝ ներառյալ պատվաստանյութը, հնարավոր են կողմնակի ազդեցություններ: Դրանք սովորաբար մեղմ են արտահայտված լինում և անցնում են ինքնաբերաբար, սակայն հնարավոր են նաև լուրջ ոտակցիաներ:

Հեպատիտ A-ի պատվաստանյութ ստացող մարդկանց մեծ մասը դրա հետ կապված որևէ խնդիր չի ունենում:

**Փոքր խնդիրները**, որոնք հետևում են հեպատիտ A-ի պատվաստանյութ ստանալուն, ներառում են՝

- ցավի զգացողություն և կարմրածություն ներարկման տեղում
- մի փոքր ջերմություն
- գլխացավ
- հոգնածություն

Եթե այս խնդիրներն ի հայտ են գալիս, ապա դրանք սովորաբար առաջանում են ներարկումից անմիջապես հետո և տևում են 1 կամ 2 օր:

Ձեր բժիշկը ձեզ ավելին կարող է ասել այդ ոտակցիաների մասին:

**Այլ խնդիրներ, որ կարող են ի հայտ գալ այս պատվաստանյութը ստանալուց հետո՝**

- Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժօգործողություններից հետո՝ ներառյալ պատվաստումը: Մոտավորապես 15 րոպե նստած կամ պառկած մնալը կարող է օգնել կանխելու ուշաթափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք թեթև գլխապտույտ ունեք, կամ տեսողության փոփոխություն, կամ ականջներում զնգոց եք զգում:
- Որոշ մարդկանց մոտ թևի ցավ է լինում, որը կարող է ավելի սուր և երկարատև լինել, քան ներարկումներին հետևող սովորական ցավի զգացողությունը: Սա շատ հազվադեպ է պատահում:
- Ցանկացած դեղամիջոց կարող է առաջացնել սուր ալերգիկ ոտակցիա: Պատվաստանյութից առաջ եկած նման ոտակցիաները շատ հազվադեպ են՝ միլիոնավոր դեղաչափեր տալուց մոտավորապես 1 դեպք, և կարող են առաջանալ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ինչպես և ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ հանդիսանա:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք՝ [www.cdc.gov/vaccinesafety/](http://www.cdc.gov/vaccinesafety/)

5

**Ի՞նչ տեղի կունենա լուրջ  
ոտակցիայի առկայության դեպքում:**

**Ի՞նչ պետք է ես փնտրեմ:**

- Փնտրեք ձեզ վերաբերող ցանկացած բան, ինչպես, օրինակ՝ սուր ալերգիկ ոտակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն կամ անսովոր վարքագիծ:

DCH-0452A  
AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.  
Translation provided by the Immunization Action Coalition

Նշանները **սուր ալերգիկ ոտակցիայի** կարող են ներառել՝ ցան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարացած շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ և թուլություն: Դրանք սովորաբար սկսվում են պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ անց:

**Ի՞նչ պետք է ես անեմ:**

- Եթե դուք կարծում եք, որ դա **սուր ալերգիկ ոտակցիա** է կամ այլ անհետաձգելի դեպք, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-1-1 կամ գնացեք մոտակա հիվանդանոց: Հակառակ դեպքում՝ զանգահարեք ձեր կլինիկա:

Այնուհետև, ոտակցիայի մասին պետք է հայտնել Vaccine Adverse Event Reporting System-ին (VAERS) (Պատվաստանյութերի հետ կապված անբարենպաստ երևույթների հաշվետվությունների համակարգին): Այդ տեղեկատվությունը պետք է գրանցի ձեր բժիշկը, կամ դուք դա կարող եք անել ինքներդ՝ VAERS վեբ կայքի միջոցով՝ [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov), կամ զանգահարելով **1-800-822-7967** հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

6

**Պատվաստանյութից ստացված  
վնասվածքի փոխհատուցման  
ազգային ծրագիրը**

National Vaccine Injury Compensation Program-ը (VICP) (Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից վնասվածք ստացած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ վնասվել են պատվաստանյութից, կարող են իրազեկվել ծրագրի և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով **1-800-338-2382** կամ այցելելով VICP վեբ կայք՝ [www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation): Փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար կա ժամանակային սահմանափակում:

7

**Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:**

- Հարցրեք ձեր առողջապահական խնամք ապահովողին: Նա կարող է ձեզ պատվաստանյութի փաթեթի ներդիրը տալ կամ առաջարկել այլ աղբյուրներ՝ տեղեկություններ ստանալու համար:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների) հետ՝  
- Չանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ  
- այցելեք CDC-ի վեբ կայքը՝ [www.cdc.gov/vaccines](http://www.cdc.gov/vaccines)

Vaccine Information Statement  
**Hepatitis A Vaccine**

7/20/2016

Armenian

42 U.S.C. § 300aa-26



Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: